

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

## ՆՈՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունվարի 25-ին տեղի ունեցավ Նորաշեն համայնքի ընդհանուր ժողով:  
Ժողովին մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի փոխմարզպետ Գ. Ստեփանյանը, համայնքի ղեկավարի  
աշխատակազմի աշխատակիցները, համայնքի ավագանու անդամները և համայնքի բնակիչներ:  
Օրակարգում . Նորաշեն համայնքի ղեկավարի՝ 2011թ-ին կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:  
/ Չեկ. Գ. Գասպարյան /

Համայնքի ղեկավար՝ Գառնիկ Գասպարյանը նշեց որ, 2011թ. Նորաշեն համայնքի բյուջեն կատարվել է 101%  
չնայած այն հանգամանքին ,որ համանյքում հաշվառված տրանսպորտային միջոցների կեսից ավելին  
չեն շահագործվում , ապակոմպլեկտավորված են,որի պատճառով հնարավոր չի լինում գույքահարկը  
գանձել ամբողջությամբ , սակայն համայնքի ղեկավարի աշխատակազմը կարողացավ հարկային եկամուտների  
հավաքագրումը կատարել պատշաճ կերպով:

Չեկուցողը նշեց, որ 2011 թ. համայնքի վարչական բյուջեի մուտքերը կազմել են 9139,7 հազ. դրամ, նախա-  
տեսված 9428,5 հազ. դրամի դիմաց:

Հողի օտարումից 285,0 հազ. դրամ:

Հողի հարկ՝ 1392.8 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 1406.5 հազ. դրամ՝ 101%

Գույքահարկ՝ 381.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 491.7 հազ. դրամ՝ 130%

Տեղական տուրքեր՝ 32.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 57.0 հազ. դրամ՝ 178%

Հողի վարձավճար՝ 644.7 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 463.4 հազ. դրամ՝ 72%

Դոտացիա՝ 6361.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 6361.0 հազ. դրամ՝ 100%

ՊՊԼ անասնաբուժ. ծառ. 600,0 հազ. դրամի դիմաց կատարվել է 300,0 հազ. դրամ՝ 50%

Այլ մուտքեր՝ նախատեսված՝ 17.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 160.0 հազ. դրամ 352%

Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ նախատեսված 2468.5 հազ. դրամի դիմաց  
կատարվել է 2478.7 հազ. դրամ –101%

#### Ծախսեր՝

1. Աշխատավարձ՝ .....	4347.4 հազ. դրամ
2. Սոց. վճար՝ .....	1074.5 հազ. դրամ
3. Բանկային ծառայություններ՝ .....	10.0 հազ. դրամ
4. Կապի ծառայություն՝ .....	116.8 հազ. դրամ
5. Էներգետիկ ծառայություն՝ .....	370.0 հազ. դրամ
6. Ապահովագրական ծախսեր՝ .....	29,0 հազ. դրամ
7. Ներքին գործուղումներ՝ .....	30.0 հազ. դրամ
8. Համակարգչային ծառայություն՝ .....	35,0 հազ. դրամ
9. Մասնագիտական ծառայություն՝ .....	64.0 հազ. դրամ
10. Գրասենյակային նյութեր՝ .....	500.0 հազ. դրամ

11.Տրանսպորտային նյութեր`.....	1360.0	հազ.դրամ
12.Հուղարկավորության նպաստ`.....	250.0	հազ.դրամ
13.Անդամավճարներ`.....	61.0	հազ.դրամ
14.Հարկեր և տուրքեր`.....	30.0	հազ.դրամ
15.Գլխավոր հատակագծի մշակման աշխ.`.....	580.0	հազ.դրամ
16.Տեղագիտական հանրագիտարանի ձ/բ.....	30.0	հազ.դրամ
Ընդամենը` .....	9463.7	հազ.դրամ:

Արտահայտվեցին ավագանու անդամները և համայնքի բնակիչները:Նրանք նշեցին , որհամայնքի ղեկավարի կողմից 2011թ. կատարած աշխատանքները գնահատում են բավարար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

**ՈՐՈՇԵՑ**

1. Համայնքի ղեկավար` Գ. Գասպարյանի կողմից ներկայացված զեկույցը ընդունել ի գիտություն:
2. Համայնքի ղեկավարի կողմից 2011թ. ընթացքում կատարած աշխատանքները գնահատել լավ:
- 3.Համայնքի ղեկավարին` առաջիկա տարվա ընթացքում առանձնակի ուշադրություն դարձնել համայնքում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը,որոնք կբարձրացնեն ազգաբնակչության կենսամակարդակը:

Նախագահող`

Գ. Բարսեղյան

Քարտուղար`

Գ. Մանուկյան

